

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Կ. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Անիի պատմության և մշակույթի համեմատաբար սակավ ուսումնասիրված մասն է կազմում քաղաքի գրչության կենտրոնի գործունեությունը: Վերջինիս վերաբերող նյութերը ցրված են զանազան ձեռագրերի, ձեռագրացուցակների, առանձին ուսումնասիրությունների ու հոդվածների էջերում և մինչև այժմ ի մի չեն բերվել:

Բազմակի ավերածությունների ու կողոպուտների ենթարկված Անիից քիչ թվով ձեռագրեր են հասել մեզ: Մակայն շնայած ձեռագրական հսկայական կորուստներին, Անիից և նրա շրջակայքի գրչատներից պահպանված մատյանները, դրանց մի մասի վերաբերյալ եղած մատենագրական ու վիճաբար վկայությունները, քաղաքի գրչատների հետ առնչություն ունեցած (նկարազարդված, նորոգված, լրացված) ձեռագրերը, բազմաթիվ հիշատակարանները թույլ են տալիս որոշակիորեն ուրվագծել քաղաքի գրչության կենտրոնի պատմությունը:

Անին մայրաքաղաք հռչակվելուց ի վեր (961 թ.) և առանձնապես հայոց կաթողիկոսական աթոռանիստ դառնալուց հետո (X դարի վերջ) վերածվեց գրավոր մշակույթի, մասնավորապես ձեռագրապահպանման խոշոր կենտրոնի: Բազմաթիվ մատյաններ էին պահվում Բագրատունյաց արքունիքում, առավել հարուստ էր կաթողիկոսարանի մատենադարանը: Զեռագրական հավաքածուներ ունեին Անիի և նրա շրջակայքի մեծաթիվ եկեղեցիներն ու վանքերը: Քաղաքում ձևավորվեցին նաև ինքնուրույն գրչատներ: Գրչության կենտրոնի գործունեության վաղ շրջանի մասին կարող ենք դատել Անիում աշխատած գրիչների և այստեղ կատարված ընդօրինակությունների վերաբերյալ եղած պատմական վկայություններից: Մատթոս Ուռհայեցին հայտնում է, որ Պետրոս Գեոտադարձի աթոռակալության ժամանակ Անիի կաթողիկոսարանի սպասավորներից էր Թադեոս անունով մեկը՝ «որ էր անպարտելի գրչութեամբ»¹: Նույն կաթողիկոսին հասցեագրված նամակներից մեկում Գրիգոր Մադիստրոսը խոսում է Անանիա Շիրակացու Քննիկոնի մասին, որը գտնվում էր «ի տան տէրունեան» և խնդրում ձեռագրի մի ընդօրինակություն ուղարկել իրեն. «...խնդրեմ ի քումմէ լուսափայլութենէդ զնորագոյն մատեան շնորհել մեզ... դիւրին վերծանեալ հասցուք ըստ կարողութեան...»²: Դատելով երկու այլ նամակներից³ Մադիստրոսը շուտով ստացել է իր խնդրածը, հետևաբար պետք է ենթադրել, որ կաթողիկոսարանում պահվող Շիրակացու երկից մի ընդօրինակություն է կատարվել և ուղարկվել հայցողին: Նշելի է, որ Պետրոս Գեոտադարձն ինքը գրական հակումներ ունեցող անձնավորություն էր: Պետք է կարծել, որ նրա օրոք Անիի կաթողիկոսարանի բազմաթիվ սպասավորների թվում (ըստ Ուռհայեցու, մշտապես կաթողիկոսարանում էին գտնվում տասներկու եպիսկոպոս, չորս վարդապետ և վաթսու վանքեց) քիչ չեն եղել գրչությամբ զբաղվողները: Կաթողիկոսի Անիում եղած ժամանակ՝ 1046 թ., նրա պատվերով մի ձեռագիր է ընդօրինակել Գեորգ գրիչը (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 988): Բազմավաստակ Գ. Հովսեփյանը մատյանի գրչության վայր է համարում «հավանորեն Անի քաղաքը, կամ շրջակա վանքերից մեկը»⁴:

¹ Պատմութիւն Մատթոսի Ուռհայեցու. Երուսաղեմ, 1869, էջ 123:

² Գրիգոր Մադիստրոսի թղթերը. Ալեքսանդրապոլ, 1910, էջ 8—9:

³ Նույն տեղում, էջ 105, 136—137:

⁴ Գ. Հովսեփյան. Գրչության արվեստը հին հայոց մեջ. մասն Գ, Վաղարշապատ, 1913, էջ 26: Տե՛ս նաև Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի. հ. Ա: Երևան, 1965, էջ 452:

Անիում ձեռագիր է գրվել ձեռքով «Գրիգոր Մուրղանեցուց գրչի ճարտարի, որոյ առևալ էր զարինական ի գանձատանէն Գագկայ թագաւորին հայոց»⁵։ Քաղաքի Կաթողիկեում սպասավորելու տարիներին գրչությամբ է զբաղվել Հովհաննէս Սարկավազը⁶, որի ուսուցչականութեան շրջանում և XII դարում, գրավոր մշակույթի կարևոր կենտրոն էր հանդիսանում Անիի Մայր տաճարը։ Գրիգոր Դ Պալավունի կաթողիկոսի (1113—1166) պատվերով այստեղ է իր ժամանակագրական երկը կազմել Սամուել Անեցին, որն էր ժառանգաւոր կաթողիկոս⁷։ Սամուել Անեցին հայտնի է նաև այլ բնույթի գործերով⁸։ Իսրավերջին և հաջորդ դարի սկզբներին Անիի կաթողիկեի փակակալն է եղել Մխիթար Անեցի պատմիչը։ Պատմագրական երկի ստեղծումից բացի Մխիթարը գրադվել է թարգմանական աշխատանքով, Սյունյաց Ստեփանոս Գ եպիսկոպոսին պատվիրել է գրել Բաղաց թագավորութեան կործանման պատմութիւնը՝ որն իրականացվել է Անիում⁹։ XII դարի վերջերին արդյունավետ գրական գործունեություն էր ծավալվել Անիի արվարձանամերձ Հոռոմոսի վանքում։ Այստեղ էր աշխատում գրիչ և մանրանկարիչ Հովհաննեսը, որը Գ. Հովսեփյանի բնորոշմամբ «մեր երևելի գրիչներից է»¹⁰, Հովհաննէսի ընդօրինակած երեք ձեռագրեր են հասել մեզ¹¹։ Նույն շրջանում Հոռոմոսում ձեռագիր է ընդօրինակել նաև վանքի աշակերտ Մխիթար Անեցին (ՄՄ, ձեռ. № 3613)։ Անիի գրչության կենտրոնը վերելք ապրեց XIII դարի սկզբներին։ Զաքարյանների տիրապետության տակ գտնվող Հյուսիսային Հայաստանի տնտեսության մեջ, հատկապես քաղաքային կյանքում, հանդես եկան նոր երևույթներ. առևտրի առարկա դարձան ոչ միայն գյուղատնտեսական և արհեստագործական արտադրանքի մի մասը, այլև հողը, ջուրը, այգիները, ամբողջ բնակավայրեր, անգամ քաղաքներ, արտադրական հաստատություններ, ձիթհաններ, ջրաղացներ, արհեստանոցներ, հյուրանոց-պանդոկներ, կուղպականներ և այլն¹²։ Նմանի պայմաններում, մի շարք գրչության կենտրոններում՝ նաև Անիում, աստիճանաբար նոր հիմքերի վրա էր դրվում ձեռագրերի ստեղծման գործը, քանի որ «գիրք պատրաստելու հետ կապված մի քանի արհեստներ դարձել էին ապրուստի միջոց, ոչ միայն պատվիրատուից վարձատրություն ստանալու, այլև գրքեր պատրաստելու և շուկայում վաճառելու նպատակով»¹³։ Փաստորեն, լեթե նախկինում ձեռագրեր ստեղծողները և ստացող պատվիրատուն նախօրոք համաձայնության էին գալիս գնի, նկարազարդման պարզ կամ ճոխ լինելու հարցերում և նոր միայն սկսվում էր մատյանի գրչությունը, ապա այժմ ձեռագրեր էին գրվում նաև առանց որևէ ստացողի պատվերի։ Միջնադարյան քաղաքում դիրքն աստիճանաբար դառնում էր վաճառքի առարկա¹⁴։

Անիի Բեխնեց վանքը գտնվում էր նշանավոր մեծատուն Տիգրան Հոնենցի հովանավորության ներքո։ Տեղի գրչատանն է ստեղծվել Մաշտոցի անվան Մատենադարանի 5554 թվահամարը կրող Ավետարանը։

5 Ժ. Գ. Գարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Երևան, 1984, էջ 296։

6 Գ. Հովսեփյան. Հիշատակարանք ձեռագրաց. հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 595։

7 Հ. Անասյան. Հայկական մատենագիտություն. հ. Ա, Երևան, 1959, էջ XLIX—LIII։

8 Ա. Արրահամյան. Սամուել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունները.— «Եղմիածին», 1952, № 1, էջ 30—36։

9 Մխիթար Անեցի. Մատենա աշխարհավար հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի. Երևան, 1983, էջ 1—5, Ստեփանոս Օրբելեան. Պատմութիւն նահանգին Սիսական. Թիֆլիս, 1910, էջ 332։

10 Գ. Հովսեփյան. Հիշատակարանք..., էջ 486։

11 Ձեռագրերից երկուսը պահվում են Երուսաղեմում (ՁԽ 1801, 3299), մեկը՝ Վենետիկում (ՁԽ 961/87)։

12 Հայ ժողովրդի պատմություն. հ. III, Երևան, 1976, էջ 581։

13 Բ. Առաքելյան. Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. I, Երևան, 1958, էջ 315։

14 Л. Киселева. О чем рассказывают средневековые рукописи. Л., 1978, с. 47.

Ձևագրի խորաններում՝ սյուների ու երիզների վրա գրված են փոքր հիշատակագրություններ, որոնք վերաբերում են գլխավորապես ձևագրի ստեղծման միջավայրի մարդկանց¹⁵։ Մատյանի գնորդ Գրիգորի հիշատակարանում հանդիպում ենք միայն ձևագրի վաճառքի գործարքի միջնորդ Սիմեոնի անվանը («յիշեսցիք... զՍիմեոն կրաւ[նա]ւոր՝ պատճառ գործոյս»)՝¹⁶, որը նաև խորաններում է հիշատակվում։ Սույն ձևագրերը վաճառքի համար նախատեսված. քաղաքային գրչատանը ստեղծված գրքի խիստ հատկանշական մի օրինակ է։

Մշտողի անվան Մատենադարանի N 6288 ձևագիրը («Հաղբատի Ավետարան») գրվել է Հաղբատի ուխտի աշակերտ, անեցի Սահակի պատվերով՝ Հաղբատում, ապա բերվել է Անի և Բեխենց վանքում նկարազարդվել Մարգարե նկարչի կողմից, որից հետո կազմվել է Հոռոմոսում՝ Աբրահամ կազմարարի ձեռքով։ Ձևագիրն աչքի է ընկնում աշխարհիկ ոգով ներթափանցված մանրանկարչությամբ, Անիի քաղաքացիների ինքնատիպ դիմանկարներով։

«Հաղբատի Ավետարանի» խորաններից մեկի լուսանցքում նկարված կազմարար Աբրահամի պատկերի մոտ Մարգարեի գրած կարճ հիշատակագրությունը տեղեկացնում է. «Կազմիչ սորին հայր [Աբրահամ եւ մի]ջ(ն)որդ ի սմին յիշեսցիք»¹⁷։ Ուրեմն, այստեղ ևս գործ ունենք միջնորդի հետ, որն այս անգամ օժանդակել է ստացողի և մանրանկարչի միջև կայացած գործարքին, որի համար էլ արժանացել է խորանի լուսանցամասում պատկերվելու պատվին։ Այս տեսակետը չի հիմնվում սոսկ «միջնորդ» բառի, թեկուզ և հավանական, վերականգնման վրա։ Հայտնի է, որ ձևագրերը կազմվում էին նկարազարդումից հետո։ Իսկ այս ձևագրում տեսնում ենք, որ նկարիչն արդեն գիտեր կազմողին և անգամ պատկերել է նրան, շնայած որ վերջինս այլ վանքում էր աշխատում։ Ձևագրի գլխավոր հիշատակարանում կարդում ենք. «Կազմեցաւ ի վանքս Հոռոմոսի... զկազմող սորին զԱբրահամ... յիշեսցիք»¹⁸։ Հետաքրքրելի է նաև, որ խորաններում պատկերված անձանցից միայն Աբրահամն է նշվում գլխավոր հիշատակարանում։

Նկատենք, որ այնպիսի մի ուշագրավ երևույթի, ինչպիսին ձևագրերի առջ ու վաճառքի, կամ նկարազարդման գործի միջնորդի գոյությունն է, հանդիպում ենք նաև հետագայի ձևագրերում, հատկապես քաղաքային միջավայրում¹⁹, սակայն հնագույն օրինակը Բեխենց վանքի ձևագրերում նշված միջնորդների հիշատակություններն են։

Ավելացնենք, որ Անիում նկարազարդված «Հաղբատի Ավետարանը» հայերեն հնագույն թվակիր ձևագիրն է, որի խորաններում հիշատակարաններ կան։ Այն նաև հայտնի առաջին մատյանն է, որը գրվելուց հետո սրբագրվել է և պահպանել սրբագրիչի անունը՝ «զՄխիթար Քոյրայրեցի յիշեա ի Քրիստոս, աղաչեմ, զուղղիչ»²⁰։

15 ԺԳ դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, էջ 72։

16 Նույն տեղում, էջ 73։ Հիշատակարանում անհարկվում է նաև մատյանի գնի մասին։

17 Նույն տեղում, էջ 69։

18 Նույն տեղում, էջ 72։

19 Սիս քաղաքում աշխատող գրիչ Հակոբը 1274 թ. նշում է իր գործի միջնորդ Գրիգորին. «...որ էր... գրել զսա իւրով միջնորդութեամբ...» (ԺԳ դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, էջ 447)։ 1287 թ. ձևագրի գրչության և երգնկայի Ս. Լուսավորչի եկեղեցուն հանձնվելու գործի միջնորդ է հիշատակվում դերձակ Շահնազը. «Յիշեսցիք... զՇահնազ դերձակն յեզրեկեա, որ միջնորդ եղեւ բարեգործութեանս» (նույն տեղում, էջ 603)։ 1352 թ. Ստեփանոս գրիչը, Սուրխաբում գրած Աստվածաշնչի հիշատակարանում, իր և ստացող Քրիստոսատուրի միջև կայացած համաձայնության միջնորդ է համարում Մելքիսեղնի միայնակյացին՝ գրելով. «Յիշեսցիք... զՄելքիսեղնի միայնակեացն, որ բազում աշխատութեամբ և ջանքի միջնորդ եղեւ բաւական յաւանքեցցոյ զՔրիստոսաւանդեա և զմեզ...»։ (ԺԳ դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան. Երևան, 1950, էջ 398)։

20 ԺԳ դարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, էջ 68։

XIII դարի սկզբներին, հավանաբար Բեխենց վանքում կամ Անիի մեկ այլ գրչատանն է ստեղծվել այժմ Զիկագոյի համալսարանի գրադարանում պահվող մի նկարազարդ ձեռագիր, որին անդրադարձել է Գ. Հովսեփյանը: Ընդգծելով ձեռագրի ժառանգական նկարների մերձավորությունը Հաղբատի նշանավոր ավետարանի հետ՝ նա դրանք «նույն շրջանի և ժամանակի գործ»²¹ է համարում: Հետաքրքիր է, որ ձեռագրի նկարիչ Աբասը իր անունը հիշատակում է երեք լեզվով՝ հայերեն, հունարեն, վրացերեն:

Անիի ձեռագրական մշակույթի հետ է կապվում քաղաքի մոտակա Մաղասուրբ ամրոցում 1222 թ. Առաքել Անեցու կողմից թարգմանված երազահանը (ՄՄ, ձեռ. № 695):

Հիշյալ ժամանակաշրջանում ծաղկում էր ապրում Հոռոմոսի գրչատունը, որի համբավվոր գրիչն ու մանրանկարիչն էր Իգնատիոսը: Նրա գրած և պատկերազարդած կամ միայն մասամբ նկարազարդած ձեռագրերից մեր օրերն են հասել յոթը, որոնցից երեքը և մի պատահիկ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում: Դրանցից ամենանշանավորը 1232 թ. Հոռոմոսում ստեղծված «Բագնայրի Ավետարանն» է (ՄՄ, ձեռ. № 1519): Ձեռագիրն ամբողջական չէ, զգալի է հատկապես մանրանկարների կորուստը: Բարեբախտաբար մեզ հաջողվեց գտնել ձեռագրի խորաններից չորսը, որոնք պահվում էին այլ թվահամարի տակ (ՄՄ, ձեռ. № 9871)²²:

Անիի շրջանից պետք է համարել Մաշտոցի անվան Մատենադարանի № 7635 Ավետարանը, որի նկարազարդումն ընդհանրություններ ունի Իգնատիոսի սրվեստի հետ²³: Ձեռագիրն ստեղծված է եղել վաճառքի համար: Ավետարանի սկզբում մանուկագույնով գծագրված ութ խորաններն են, որոնցից վերջինի ստորին Լորիի վրա գրված է. «Զմեղապարտ և զանարժան գրիչ Սոսթենէ, յիշեսցիք ի Տէր»²⁴: Ձեռագրի գրչությունից հետո գլխավոր հիշատակարան չի դրվել, քանի որ այն պետք է լրացվեր միայն վաճառքի ժամանակ: 1249 թ. Ավետարանը գնող և Հոռոմոսի վանքին նվիրող Ավետեացը հիշատակարանում չի նշում գրիչ Սոսթենեսին²⁵:

Այսպիսով, XIII դարի առաջին տասնամյակներին Անիի գրչության կենտրոնը աշխուժություն էր ապրում: Ձեռագրերի ավանդական պատվիրատուների, աղնվականության և հոգևորականության կողքին հայտնվել էր քաղաքային զասի ձեռներեց ներկայացուցիչը: Գրքի պահանջարկի մեծացման պայմաններում քաղաքային գրչատները պատրաստում են վաճառքի համար նախատեսվող ձեռագրեր, հանդես են դալիս նաև հատուկ միջնորդներ, որոնք կապ են ստեղծում գրչատան և գնորդի միջև: Քաղաքային զասի ստացողին չէր կարող պահանջել նաև ձեռագրերի հարդարանքի կանոնականությունը: Նրան պետք էին իրականությունն արտացոլող մանրանկարներ՝ աշխարհիկ արվեստ՝ կրոնական գրքում, ինչը և նկատվում է Բեխենց վանքի ձեռագրերում: Անեցիները սովորաբար իրենց ձեռագրերը նվիրում էին քաղաքի կամ մերձակայքի եկեղեցիներին: Այսպես՝ «Հաղբատի Ավետարանը» Բեխենց վանքում նկարազարդվել և Հոռոմոսում կազմել տալուց հետո Սահակ անեցին այն նվիրել է Արշո Առիճի ուխտին²⁶: 1213 թ. Անիի Կաթողիկեին երեք ձեռագիր է նվիրել Տիգրան Հոնենցը²⁷, 1235 և 1236 թթ. մայր տաճարը ստացել է երկու Ավետարան, որոն-

21 Գ. Հովսեփյան. Մի ձեռագիր Ավետարան.—Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության. պր. Բ, Նյու Յորք, 1943, էջ 59:

22 Զորա խորան «Բագնայրի Ավետարանից».—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.» 1985, № 10, էջ 97:

23 Т. Измайлова. Декор рукописей Матенадарана №№ 2952 и 7635.—«Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 4, 191—193:

24 Ժ. Դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 252:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, էջ 71:

27 Դիվան հայ վիմագրության. պր. 1, կազմեց Հ. Օրբելի. Երևան, 1966, էջ 34:

ցից մեկը գրվել էր 1181 թ. Հոռոմոսում, Հովհաննես գրչի ձեռքով: 1232 թ. Բագրատիոսի գրած Ավետարանը ստացող պատրոն հոռոսը նվիրել է Բագրատի վանքին, նույն գրչի մեկ այլ ձեռագիր 1236 թ. հանձնվել է Խծկոնք²⁵ և ալին:

Անիի գրչության կենտրոնի բարգավաճումը ընդհատվեց 1236 թ. մոնղոլական արշավանքի հետևանքով: Անիի գրավման և ավերման ժամանակ րազմաթիվ ձեռագրեր ոչնչացան և գերեզմարվեցին: Անիից հեռավոր Կիլիկիա տարված մի ձեռագրի հիշատակարան վկայում է. «Ի Թուրանիս Հայոց ՈԶՆ (1236)... ի պաշարեալ զմայրաքաղաքն Անի, եւ զամենիսեան ի սուր սուսերի մաշեալ, զսրբութիւնս անարգեալ եւ զգրեանս գերի վարեալ: Եւ գիրքս այս կոչեցեալ Վեցարեա, բերաւ յաշխարհ Կիլիկեցիոց...» (ընդգծումը մերն է—Կ. Մ.)²⁶:

Մոնղոլական ներխուժումը, ինչպես և հարկային ծանր քաղաքականությունը, ճակատագրական եղան Անիի համար ու թեև մինչև հաջորդ դարի կեսերը քաղաքը Զաքարյանների տոհմի ներկայացուցիչների ենթակայության տակ էր, սակայն աստիճանաբար գնում էր դեպի անկում: Բայց գրչության կենտրոնը շարունակում էր գործել: 1292 թ. Երզնկայից Անի գաղթած Ահարոնը այստեղ լրացնում է կիսատ թողած մատյանը (ՄՄ, ձեռ. Ն: 1342), հիշատակարանում շնորհակալությամբ նշելով անեցի Սարկավագ քահանային օրը զաւրինակն շնորհեց...»:

1298 թ. Անիի ներքին բերդում Ավետարան է ընդօրինակել Եղբայրիկ գրիչը²⁷: Պատվիրատուն է Հակոբը «ի մայրաքաղաքէս Անոյ»: Ձեռագրի գլխավոր հիշատակարանը տեղեկություններ է պարունակում ինչպես պատվիրատուի տոհմի և մատյանի գրչության շարժառիթի, այնպես էլ նրա գրվելու տեղի, ժամանակի և Արջո Առիճի ուխտին նվիրվելու վերաբերյալ: Գրչի հիշատակարանի հաջորդ էջում գետեղված է հաշատուր նկարչի կարճ հիշատակարանը: Ուշագրավ է, որ նկարիչը չի տալիս գրչի անունը, չի նշում նաև պատվիրատու Հակոբին, այլ հիշատակարանն ավարտում է երեք պատարագի հայցումով. «...մին Աւետեցն, մին Տիկնոջն, մին Արքային...»: Այս անուններին, ինչպես և հենց հաշատուրի անվանը չենք հանդիպում Եղբայրիկի հիշատակարանում: Մնում է ենթադրել, որ մանրանկարիչն իր գործն իրականացրել է ոչ թե անեցի Հակոբի, այլ վերը նշված անձանց պատվերով, ձեռագրի գրչությունից որոշ ժամանակ անց: Պատահական չէ, որ հաշատուրի մանրանկարները ոճական մեծ ընդհանրություններ ունեն Վասպուրականի մանրանկարչության հետ²⁸:

XIV դարում Անիում գրված ձեռագրերից մեզ է հասել միայն մեկը՝ 1342 թ., իսկ 1379 թ. ստեղծված մատյանի սոսկ հիշատակարանն է պահպանվել: Առաջինը Կիրակոս երեցի պատվերով գրված ճաշոց է²⁹, Գրչի հիշատակարանը չի պահպանվել, բայց հավանաբար դրա շարունակությունն է կազմել ստացողի հիշատակարանը. «Ընդ նմին յիշեսցիք ղյետի ստացաւ գրոց ղԿիրակոս եր[էց] և զամուսին իմ գԳայիանէ... Բայց գրեցաւ սայ ի յԱնի, ի թվ. 292 (1342), ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ և իրիցկնոջն և ծնողաց իմոց...»³⁰, Կարծում ենք, որ «ղյետի» բառը հիշատակարանում օգտագործված է ոչ թե հետագայի իմաստով, այլ միայն որպես ինքնախարազանման սովորական դարձած ածական: Այդ երևում է հետագա շարադրանքից, երբ Կիրակոսը գրում է. «Բայց գրեցաւ սայ... ի հալալ արդեանց իմոց», այսինքն իր «արդեամբ» գրել է տվել ու ստացել ձեռագիրը, այլ ոչ թե միայն հիշատակարանը:

²⁵ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 197, 179, 194:

²⁶ Նույն տեղում, էջ 198:

²⁷ Ձեռագիրը պահվում է Լենինգրադի արևելագիտության ինստիտուտում՝ В 44. տե՛ս К. Юзбашьян. Армения рукописей 1298 года.—«Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2, էջ 77—83: Т. Izmailova. Le manuscrit enluminé d'Ani 1298.—Revue des études arméniennes, t. VIII, Paris, 1971, p. 289—309.

²⁸ Т. Izmailova. Op. cit.

²⁹ 1950-ական թթ. ձեռագիրը պահվել է Թբիլիսիում, Դ. Պ. Գորգենի հավաքածուում:

³⁰ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 353:

Արժեքավոր մի հիշատակարան է պահպանվել Ղ. Փիրղալեմյանի «Նշխարք պատմության հալոց» (ՄՄ, ձեռ. № 4515) անտիպ աշխատության մեջ: Այն վկայում է, որ 1379 թ. Անիում Ավետարան է ընդօրինակել Թորոս գրիչը: Բուն ձևագրի գտնվելու վայրն անհայտ է:

1357 թ. պարոն Ասիլի հանձնարարությամբ Անիում, Ներսես գրչի ձեռքով նորոգվել է Կիլիկիայի Կեոան թագուհու պատվերով 1283 թ. Սկևռայում գրված Ավետարանը (ՄՄ, ձեռ. № 6764) և նվիրվել Առաքելոց եկեղեցուն: Նորոգման և նվիրատվության հիշատակարանը նաև պատմագրական կարևոր արժեք է ներկայացնում: Հետաքրքիր է, որ Ասիլի եղբայր անեցի Պարոն էլ նույն շրջանում նորոգել է տվել գերությունից փրկագնված «Բագնայրի Ավետարանը»:

Գրչության արվեստի հսկող գիտակ էր Սուլթանիա քաղաքում հաստատված գրիչ, մանրանկարիչ և կազարար Մխիթար Անեցին, որից հայտնի են շուրս ձևագրեր, գրված 1321, 1334, 1338 և 1356—57 թթ.: Մխիթարի ձեռագրական ժառանգությունը թեև ուղղակիորեն չի վերագրվում Անիի գրչության կենտրոնին, բայց իրավամբ նրա մի շահավիղն է:

Նշանավոր գրիչ և գրչության ուսուցիչ է եղել XIV դարի վերջերի և XV դարի սկզբների Անիի եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկը: Ծիշտ է, քաղաքական ծանր պայմանների հետևանքով նա կյանքի վերջում ստիպված էր հեռանալ հարադատ քաղաքից, սակայն մինչև այդ մի Աստվածաշունչ (Վիեննայի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. № 55) է ընդօրինակել Անիում: Հիշատակագրություններից մեկում իրեն անվանում է «...անպետ գրիչ Անոյ նահանգիս»³⁴: Քաղաքից հեռանալուց հետո Հովհաննես Ոսկեփորիկը ձեռագրեր է ընդօրինակել Սանահինում, Վրաստանի սահմանամերձ Թմոքվի ամրոցում: Հովհաննեսը մեղ հայանի անեցի վերջին գրիչն է:

Այսպիսով, Անիի գրչության կենտրոնը ծնունդ է առել քաղաքի ձևավորման շրջանում և շարունակել է իր գոյությունը մինչև նրա վերջնական ավերումն ու ամայացումը: Ինչ խոսք, որ Անիում աշխատած գրիչները, նրանց պրած ու նկարագրագած մատյանները շատ ավելի բազմաթիվ են եղել, բայց դրանց մեծ մասը ոչնչացել է: Այսուհանգերձ, թվարկված ձեռագրերը, վերը բերված վկայություններն ու տվյալները հնարավորություն են ընձեռում իրավասու տեսնել գրչության կենտրոնի տեղական գործունեությունը: Դրանով իսկ մեծ մասշտաբաբար ընդարձակվում մշակութային ժառանգությունը հարստանում է մի ինքնատիպ էջով, որն իր արժանի աեղը պետք է ունենա ինչպես Անի քաղաքի, այնպես էլ հայ գրչության պատմության մեջ:

РУКОПИСНЫЙ ЦЕНТР ГОРОДА АНИ

К. А. МАТЕВОСЯН

Резюме

Средневековая столица Армении—город Ани был центром скрипториев X—XIV вв. В городе, при царском дворе, патрларшем троне и различных церквях имелись богатые книжные собрания. В Ани были переписаны и иллюстрированы многочисленные рукописи, часть которых была уничтожена во время неоднократных погромов города.

С достаточной определенностью представить рукописный центр города Ани позволяют как сохранившиеся до наших дней рукописи (Матенадаран, №№ 5554, 1519, 3613, Ленинград, Институт востоковедения, В-44 и др.) и те из них, которые только иллюстрировались или дополнялись в городе (Матенадаран, №№ 6288, 1342, 6764), так и эпиграфические и другие исторические источники.

³⁴ Ղ. Տաշյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի վիեննայ, 1895, էջ 259: